ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕГАРКУНИКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ с.НОРАШЕН

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15

05. ապրիլի 2017թ.

Նորաշեն համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղապետարանի ծառայողական ՎԱԶ-21214 ՆԻՎԱ մակնիշի, 2006 թվականի արտադրության, թեթև մարդատար ավտոմեքենան օտարելու մասին:

/ Զեկ.Գ.Գասպարյան /

Ղեկավարվելով՝ ՀՀ «ՏԻՄ» օրենքի հոդված-18, կետ-21-ի պահանջներով, և հիմք ընդունելով զեկուցողի՝ համայնքի ղեկավար Գառնիկ Գասպարյանի զեկույցն առ այն, որ համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենան ձեռք է բերվել 2010 թ.-ին և արդեն 7-ը տարի է ինչ օգտագործվում է գյուղապետարանի կարիքների համար: Նշված տարիների ընթացքում ավտոմեքենան երկու անգամ ենթարկվել է վթարի, բազմակի անգամ ենթարկվել ընթացիք վերանորոգման և այժմ էլ ունի կապիտալ վերանորոգման կարիք, որոնք պահանջում են մեծ ծախսեր, ուստի մեքենայի հետագա շահագործումը համայնքի կարիքներ համար համարվում է ոչ շահավետ: Ելնելով վերոնշյալ փաստերից, համայնքի ավագանին .

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Նորաշեն համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղապետարանի ծառայողական ՎԱԶ-21214 ՆԻՎԱ մակնիշի, 2006 թվականի արտադրության, թեթև մարդատար ավտոմեքենան՝ հաշվառման վկայական SK000149, տրվ. 14.05.2010թ., օրենքով սահմանված կարգով օտարել:
2. Նորաշենի համայնքապետարանի աշխատակազմին.
Ավտոմեքենայի օտարման ժամանակ մեկնարկային գին սահմանելու համար դիմել համապատասխան լիցենզավորված կազմակերպության, որպեսզի ստանանք փորձագիտական եզրակացություն ավտոմեքենայի շուկայական արժեքի վերաբերյալ:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ- 5, դեմ-0, ձեռնպահ-0
Համայնքի ավագանու անդամներ.

..... Պ.Ավագյան
..... Ա.Գրիգորյան
..... Գ.Բարսեղյան
..... Վ.Մարգարյան
..... Խ.Սարիբեկյան

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ